Այստեղ ամեն ինչ կարօտ է արմատական վերանորոգութեան, և դա ժամանակի, հսկայական անդուլ աշխատանքի կարօտ է։ Այստեղ գործող ոյժեր, զօրեղ գործօններ են հարկաւոր գիւղացիութիւնը ներկայ խաւար դրութիւնից ազատելու և նրա տնտեսական-կուլտուրական և քաղաքական կեանքը բարելաւելու համար։

Բայց սիրելիս, ես չգիտեմ, թէ Դու գիւղական կեանքի որ երևոյթի մասին կուզէիր աւելի շուտ ծանօթանալ, այդ ինձ յայտնի չէ. խնդրում եմ երկտողով յայտնիր, որի հետ նաև գրիր ինձ, թէ ինչ խաբրիկներ կան «Վէրան աշխարհիցս». Քեզ ծանօթ է, որ ես այստեղ լրագրից զրկուած եմ և ահա երկուկէս ամիս է ոչ մի տեղեկութիւն չունեմ հայրենիքիցս։ Գրիր ուրեմն երկար, շատ երկար։ Ա՜խ հայրենիքիս կարօտը շատ է տանջում ինձ սիրելիս, խիստ շատ . . .

Անհամբեր սպասում եմ նամակիդ։

Քո՝
ԱՐԱՄ

Փէրիա—Արթունաբաղ, 14 Սեպտեմբեր, 1918.

Իմ սիրելի Վարդուհի,

Սիրով ողջունեցի 5 Սեպտեմբեր թուակիր նամակդ։ Հաղորդած տեղեկութիւններդ խիստ շահագրգռական էին. յայտնում եմ խորին շնորհակալութիւններս։

Սիրելիս, ցանկանում ես, որ գրեմ Քեզ գիւղական տըների, նրանց առտնին կեանքի, ուտելիքների, խմիչքների և ընդհանրապէս նրանց ներքին կենցաղի մասին. երէկ այդ նպատակով ես այցելեցի մի քանի տներ և երկար ուսումնասիրութիւնից յետոյ՝ գրում եմ Քեզ. իսկ ուտելիքների և